FINCA

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հիփոթեքային վարկ

Անշարժ գույքի ձեռքբերման/ կառուցապատման նպատակով վարկի պայմաններ

Ուժի մեջ է 2022թ.-ի դեկտեմբերի 26-ից՝ համաձայն «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի Վարչության 20.12.2022-ի 143/2022 որոշման (Հավելված 1)

ՎԱՐԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ	
Ծրագիր	«Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ
Վարկի նպատակ	Գոյություն ունեցող կամ կառուցվող բնակելի անշարժ գույքի ձեռքբերում/կառուցապատում
Արժույթ	**ՀՀ դրամ**
Գումար	**2,000,000 – 35,000,000**
Ժամկետ (ամիս)[1]	**120 – 180 ամիս**
Տարեկան անվանական տոկոսադրույք (հաստատուն)[2]	**14%**
Տարեկան փաստացի տոկոսադրույք[3]	**15.5%-16.7%**
Սպասարկման [ամենամսյա] վճար	**0%**
Տրամադրման [միանվագ] վճար	**1%, առավելագույնը 250,000 ՀՀ դրամ**
Տրամադրման եղանակ	Անկանխիկ[4]
Նվազագույն կանխավճար	30% - ձեռք բերվող անշարժ գույքի ձեռքբերման և գնահատված շուկայական արժեքների նվազագույնից (լրացուցիչ անշարժ գույք գրավադրելու դեպքում՝ 10%):

ՎԱՐԿԱՌՈՒՀԻ/ՀԱՄԱՎԱՐԿԱՌՈՒ(ՆԵՐ)ԻՆ[5] ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

- ՀՀ-ում գրանցված և բնակվող ֆիզիկական անձ, ում գործունեության և/կամ բնակության վայրը ՖԻՆՔԱ-ի սպասարկման տարածքում է:
- Տարիքը՝ 21- 70: Ընդ որում՝ դիմելու պահին տարիքի և ակնկալվող վարկի ժամկետի գումարը չպետք է գերազանցի 70-ը (եթե այլ պահանջ չի ներկայացվել Վարկային կոմիտեի կողմից): Սույն պահանջը կիրառելի է նաև երաշխավորների համար:
- Կայուն ամսական եկամտի առկայություն առնվազն վերջին 6 ամիսների ընթացքում:
- Վերջին 12 ամիսների ընթացքում բոլոր վարկերի (գործող և մարված) գծով ուշացված օրերի ընդհանուր քանակը չի գերազանցում 30 օրը[6], բացառությամբ, եթե ժամկետանց պարտավորության/պարտավորությունների ընդհանուր արժեքը չի գերազանցում 1,000 ՀՀ դրամը:
- Ընդհանուր պարտավորությունների (ներառյալ գործող և հայցվող վարկերի մարումները, ապահովագրավճարը) ամսական մարումներ հարաբերած վարկառուի և համավարկառուների (առկայության դեպքում) ընդհանուր զուտ եկամտին գործակից (այսուհետ՝ ԸՊԵ)՝ **առավելագույնը՝ 45%:**
- Վարկառուն պետք է գործի իր անունից և իր օգտին, արգելվում է վարկ վերցնել հօգուտ երրորդ անձի:
- Վարկը կարող է տրամադրվել մեկից ավելի վարկառուների (համավարկառու), որի դեպքում վարկառուի նկատմամբ սահմանված պահանջները տարածվում են նաև համավարկառու(ներ)ի նկատմամբ:

ՎԱՐԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՎԱԶԱԳՈՒԻՑ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Վարկ/գրավ հարաբերակցություն

- Ոչ ավելի, քան ձեռք բերվող անշարժ գույքի **70%,** ընդ որում՝ հաշվարկի ժամանակ հիմք է ընդունվում անշարժ գույքի ձեռքբերման և գնահատման արժեքներից նվազագույնը:
- Ոչ ավելի, քան ձեռք բերվող անշարժ գույքի արժեքի **90%**, եթե
  - գրավադրվում է լրացուցիչ բնակելի անշարժ գույք, ընդ որում, ձեռք բերվող և այլ բնակելի անշարժ գույքերի գրավադրման դեպքում, վարկի գումարը չի կարող գերազանցել գրավադրված անշարժ գույքերի ընդհանուր արժեքի **70%-**ը:
  - եթե առկա է հիփոթեքային պարտավորության ապահովագրություն վարկ/գրավ գործակցի **70%-**ը գերազանցող՝ չվճարված կանխավճարի գումարի չափով:

Ոչ ավելի, քան կառուցապատվող և այլ բնակելի անշարժ գույքի արժեքի **70%-ը**, միևնույն ժամանակ վարկի առավելագույն գումարը չպետք է գերազանցի հաճախորդի կողմից ներկայացված կառուցման աշխատանքների կատարման նախահաշվի գումարի **80%-**ը: Կառուցապատման նպատակով տրամադրվող վարկերի դեպքում, բացի կառուցապատվող գույքից պետք է գրավ դրվի նաև այլ բնակելի անշարժ գույք:

- Անշարժ գույքի հիփոթեքի պայմանագիրը պետք է վավերացվի նոտարական կարգով:
- Գույքի նկատմամբ սեփականության իրավունքը, հիփոթեքի իրավունքը և այլ գույքային իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՎԱՐԿԻ ՄԱՐՈՒՄ

- **անուիտետային**՝ վարկի մայր գումարի և տոկոսագումարի հանրագումարի ամսական հավասարաչափ մարումներ;
- **զսպանակաձև**՝ մայր գումարի վճարումն ամսական հավասարաչափ մասերով, իսկ տոկոսագումարներինը՝ ամսական:

Վարկառուն առանց տուժանք վճարելու կարող է վաղաժամկետ՝ ամբողջովին կամ մասնակիորեն, մարել վարկը: Վաղաժամկետ մարման դեպքում մայր գումարի հետ միասին, համամասնորեն նվազեցվում է վարկառուի կրեդիտավորման ընդհանուր ծախսը (տոկոսագումարներ, այլ վճարներ), բացի այն դեպքերից, երբ վճարողն այլ գրավոր հանձնարարական է տալիս: Վարկառուի ընտրությամբ վաղաժամկետ մարված գումարին համամասնորեն նվազեցվում է ամսական վճարումների չափը՝ թողնելով կրեդիտի մարման ժամկետն անփոփոխ, կամ նվազեցվում է վարկի մարման ժամկետը՝ ամսական վճարումների չափը թողնելով անփոփոխ:Չեն նվազեցվում ՀՀ օրենքով և պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար վճարվող տուժանքներն ու այլ վճարները, և «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածով սահմանված վճարները: Վարկն ամբողջությամբ վաղաժամկետ մարելիս վարկառուն վճարում է տվյալ օրվա դրությամբ հաշվարկված՝ սպասարկման (առկայության դեպքում) և այլ վճարները, տոկոսագումարները, մայր գումարը: Ապագա ամիսների վճարումները կարելի է կատարել նախօրոք՝ ներկայացնելով գրավոր հանձնարարական: Ապագա յուրաքանչյուր ամսվա մարումը կատարվում է հետևյալ հերթականությամբ. 1) սպասարկման և այլ վճարներ (առկայության դեպքում), 2) տոկոսագումար, 3) մայր գումար:

ԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՏՈՒԳԱՆՔՆԵՐ

- **Կազմակերպությունը պարտավոր է հաճախորդին տրամադրել հիփոթեքային վարկի առաջարկը և կրեդիտավորման պայմանագրի նախագիծը պայմանագրի կնքման օրվանից առնվազն յոթ օր առաջ և հաճախորդին ընձեռել հնարավորություն մտածելու և վերջնական որոշում կայացնելու համար: Առաջարկն ուժի մեջ է յոթ աշխատանքային օր, եթե առաջարկի մեջ ավելի երկար ժամկետ նախատեսված չէ:**
- Գրավադրվող անշարժ գույքը գնահատվում է ՖԻՆՔԱ-ի հետ համագործակցող կազմակերպությունների կողմից:
- **Վարկառուի կողմից պայմանագրային պարտավորությունների խախտման դեպքում ՖԻՆՔԱ-ն կարող է պայմանագրով և պայմանագրի անբաժանելի մաս կազմող պայմաններով նախատեսված կարգով փոփոխել վարկի տոկոսադրույքը:**
- Սահմանված ժամկետներում պարտավորությունները չկատարելու դեպքում վարկառուն պարտավորվում է յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար վճարել **ՏՈՒԺԱՆՔ**՝ 1) ժամկետանց մայր գումարի **0.13%**-ի չափով, 2) ժամկետանց տոկոսագումարի **0.13%**-ի չափով:
- Մայր գումարի մարման ժամկետի խախտման դեպքում ժամկետանց գումարի նկատմամբ պայմանագրով նախատեսված տոկոսադրույքի կիրառումը դադարեցվում է և խախտման օրվանից մինչև վարկի մարման օրը կիրառվում է տարեկան **24% տոկոսադրույք**: Եթե վճարվող գումարը բավարար չէ ժամկետանց բոլոր պարտավորությունների կատարման համար, նախ մարվում են վարկատուի այն ծախսերը, որ ուղղված են եղել վճարման ենթակա գումարների ստացմանը, այնուհետև՝ սպասարկման վճարները (առկայության դեպքում), տուժանքները, տոկոսագումարները և մայր գումարը: Այս հերթականությունը կարող է փոխվել վարկատուի որոշմամբ՝ վարկառուի գրավոր դիմումի հիման վրա:
- **Պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում դեպքում այդ տեղեկությունն ուղարկվում է Վարկային Բյուրո, որտեղ ձևավորվում է ձեր վարկային պատմությունը: Վատ վարկային պատմությունը կարող է խոչընդոտել ձեզ ապագայում վարկ ստանալ:**
- **Պարտավորությունները ժամանակին չկատարելու դեպքում կարող եք զրկվել բնակարանի նկատմամբ Ձեր իրավունքներից, գրավադրված գույքը կարող է բռնագանձվել օրենքով սահմանված կարգով:**
- **Գրավի հաշվին պարտավորությունները մարելիս գրավի անբավարարության դեպքում մարումները կկատարվեն Ձեր այլ գույքի հաշվին:**

ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Տրամադրում տրանշերով (մաս-մաս)[7]	Կառուցապատման դեպքում առավելագույնը 5 տրանշ:
Սահմանափակումներ	Անշարժ գույքը չի կարող ձեռք բերվել այն ֆիզիկական անձից, ով հանդիսանում է վարկառուի/համավարկառուի ընտանիքի անդամ:
Ապահովագրություն	• Գրավադրված գույքի ապահովագրություն: • Վարկառուի և համավարկառու(ներ)ի (առկայության դեպքում)՝ դժբախտ պատահարից և մահացության դեպքի ապահովագրություն: Ընդ որում համավարկառու(ներ)ի առկայության դեպքում դժբախտ պատահարից և մահացության դեպքի ապահովագրությունը կատարվում է վարկի գումարից վարկառուի և համավարկառու(ներ)ի եկամուտներին համամասնորեն: • Հիփոթեքային պարտավորության ապահովագրություն (անհրաժեշտության դեպքում): Ընդ որում՝ ապահովագրությունը կատարվում է վարկ/գրավ հարաբերակցության 70%-ը գերազանցող չվճարված կանխավճարի գումարի չափով: • Ապահովագրությունը կատարվում է «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի հետ համագործակցող ապահովագրական ընկերությունների կողմից՝ վարկառուի և վարկատուի համար ընդունելի պայմաններով: «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի հետ համագործակցող ապահովագրական ընկերությունների ցանկը, ինչպես նաև ապահովագրության, գնահատման, նոտարական ծառայությունների համար և/կամ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար վճարների վերաբերյալ տեղեկատվությունը տե՛ս 4-րդ էջում:
ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԵՎ ՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ	
Պահանջվող փաստաթղթեր և տեղեկատվություն	• Վարկի տրամադրման դիմում-հայտ; • Վարկառուի և համավարկառու(ներ)ի/երաշխավոր(ներ)ի (առկայության դեպքում) անձը հաստատող փաստաթուղթ; • Վարկառուի և համավարկառու(ներ)ի/երաշխավոր(ներ)ի (առկայության դեպքում) Հանրային ծառայության համարանիշ՝ ՀԾՀ (վերջինիս բացակայության դեպքում՝ համապատասխան տեղեկանք բացակայության մասին); • Ամուսնության վկայական (առկայության դեպքում, բացակայության դեպքում՝ ամուսնական կարգավիճակի վերաբերյալ հայտարարություն); • Ամուսնու (կնոջ) անձը հաստատող փաստաթուղթը (եթե վարկառուն/համավարկառուն ամուսնացած է); • Եթե վարկառուն և համավարկառուն (առկայության դեպքում) վարձու աշխատող են՝ 1. Եկամուտների մասին տեղեկանք գործատուից, որտեղ նշվում է վարկառուի զբաղեցրած պաշտոնը, աշխատանքային ստաժը տվյալ կազմակերպությունում և ամսական եկամուտի չափը (համախառն կամ զուտ, ընդ որում, զուտ եկամտի դեպքում պետք է տեղեկանքում համապատասխան նշում կատարվի), 2. Եթե ընթացիկ աշխատավայրում աշխատանքային ստաժը փոքր է 12 ամսից, ապա անհրաժեշտ են տվյալներ հաճախորդի նախկին զբաղվածության մասին՝ գործատուն, զբաղեցրած պաշտոնը, աշխատանքային ստաժը, ստացված եկամուտների չափը, 3. Տվյալներ այլ եկամուտների վերաբերյալ (առկայության դեպքում), 4. Վարկառուի ամուսնացած լինելու դեպքում ամուսնու/կնոջ եկամուտների մասին տեղեկանք (ոչ պարտադիր): • Եթե վարկառուն և համավարկառուն (առկայության դեպքում) ինքնազբաղված են՝ 1. Հարկ վճարողի հաշվառման համարը, 2. Գրանցման վկայական, կանոնադրություն (առկայության դեպքում), 3. Գործունեության տվյալ տեսակով զբաղվելու թույլտվության փաստաթղթերը, եթե օրենսդրության համաձայն, տվյալ գործունեության համար անհրաժեշտ է համապատասխան մարմինների կողմից հատուկ թույլտվություն, 4. Վերջին 1 տարվա ֆինանսական և հարկային հաշվետվությունները՝ հաստատված հարկային մարմնի կողմից, 5. Վերջին 6 ամիսների եկամուտների և ծախսերի հաշվետվությունները/գրառումները (առկայության դեպքում): • Գրավադրվող անշարժ գույքի գնահատման հաշվետվություն, • Գրավադրվող բնակելի անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական, • Միասնական տեղեկանք գրավադրվող գույքի սահմանափակումների վերաբերյալ՝ տրված ՀՀ Կառավարությանն առընթեր Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից: • Գրավադրվող գույքի /կառուցապատման նախահաշիվ (միայն կառուցապատման վարկերի դեպքում) և շին. թույլտվություն՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում; • Գրավադրվող անշարժ գույքի սեփականության հիմքը; • Այլ փաստաթղթեր՝ ըստ պահանջի; Նշված փաստաթղթերը վարկառուի կողմից ներկայացվում են թղթային և/կամ էլեկտրոնային եղանակով՝ նման պահանջ ստանալուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում:
Վարկի տրամադրման որոշման վրա ազդող գործոններ	**Դրական գործոններ** • Դրական վարկային պատմություն • Վարկունակության բավարար մակարդակ • Կայուն եկամուտների առկայություն **Բացասական գործոններ** • Բացասական վարկային պատմություն • Վարկունակության անբավարար մակարդակ • Կայուն եկամուտների բացակայություն • Կեղծ կամ անարժանահավատ տեղեկատվության տրամադրում • Այլ բացասական գործոններ
Ժամկետներ**	• Վարկային հայտի վերաբերյալ որոշման կայացում՝ առավելագույնը 4 աշխատանքային օր: • Հիփոթեքային վարկի առաջարկը վարկառուին տրամադրվում է պայմանագրի կնքման օրվանից առնվազն 7 օր առաջ և հաճախորդին ընձեռնվում է հնարավորություն մտածելու և 7 օրվա ընթացքում վերջնական որոշում կայացնելու համար: • Դրական որոշման մասին հայտ ներկայացնողին գրավոր կամ բանավոր տեղեկացում՝ առավելագույնը 1 աշխատանքային օր: • Բացասական որոշման մասին հայտ ներկայացնողին գրավոր (թղթային կամ էլեկտրոնային) տեղեկացում՝ առավելագույնը 1 աշխատանքային օր: • Վարկի փաստացի տրամադրում՝ հայտը ներկայացնելու պահից առավելագույնը 15 աշխատանքային օր:

	• Վարկային կոմիտեի որոշման վավերականության առավելագույն ժամկետ՝ մեկ ամիս: ****Հաճախորդի կողմից ներկայացվող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման և փաթեթի ամբողջական լինելու պարագայում:**
Այլ	Վարկը կարող է ձևակերպվել ՖԻՆՔԱ-ի բոլոր մասնաճյուղերում: **Նախքան պայմանագրի կնքումը հաճախորդին տրամադրվում է անհատական թերթիկ, որտեղ ներկայացված է տրամադրվելիք վարկի անհատական պայմանները:**

ՆՇՈՒՄՆԵՐ

1. Վարկի մարման ժամանակացույցից ելնելով վարկի ժամկետը կարող է երկարաձգվել առավելագույնը մինչև 45 օր:
2. Հաշվարկվում է վարկի մնացորդի նկատմամբ: Պայմանագրով սահմանված դեպքերում տոկոսադրույքը կարող է ճշգրտվել:
3. **Վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա՝ վարկի մնացորդից: Իսկ տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը տոկոսագումարները և վարկի տրամադրմանն առնչվող բոլոր այլ պարտադիր վճարները սահմանված կարգով կատարելու դեպքում: Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգը ներկայացված է ստորև:**
4. Վարկի գումարը փոխանցվում է վաճառողի կամ կառուցապատողի հաշվեհամարին:
5. Համավարկառուները պետք է լինեն վարկառուի ընտանիքի անդամ: Ընտանիքի անդամ են համարվում հայրը, մայրը, ամուսինը, ամուսնու ծնողները, տատը, պապը, քույրը, եղբայրը, երեխաները, քրոջ/եղբոր ամուսինն/կինն ու երեխաները:
6. Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ վարկառուն ներկայացնում է փաստաթղթային հստակ հիմնավորումներ առ այն, որ ուշացումները պայմանավորված չեն եղել իր վարքագծով: Նման դեպքերում ուշացված օրերի ընդհանուր քանակը չպետք է գերազանցի 90 օրացույցային օրը և միևնույն ժամանակ վարկի ռիսկի դասը պետք է լինի առավելագույնը «հսկվող» համաձայն ՀՀ ԿԲ և ՀՀ ՖՆ համատեղ հաստատված կարգի վերջին 12 ամիսների ընթացքում:
7. **Տրանշ՝** հաստատվում է ընդհանուր վարկ մեկ վարկային պայմանագիր կնքելով, սակայն տրամադրումը կատարվում է մասնակի, յուրաքանչյուր տրանշի համար նախօրոք հաստատված պայմանների կատարումից հետո: Առաջին և վերջին տրանշի միջև տրամադրման առավելագույն ժամկետը՝ 9 ամիս:

ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՕՐԻՆԱԿ

Հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևի հիման վրա.

$$A = \sum_{n=1}^{N} \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

որտեղ՝

A – վարկի սկզբնական գումարը

n – վարկի մարմանն ուղղված վճարի հերթական համարը

N – վարկի մարմանն ուղղված վերջին վճարի հերթական համարը

K_n – վարկի մարմանն ուղղված n-րդ վճարի գումարը

D_n – վարկի տրամադրման օրից մինչև մարմանն ուղղված n-րդ վճարման օրն ընկած ժամանակահատվածը՝ օրերով

i – տարեկան փաստացի տոկոսադրույքը

Վարկի գումար	4 000 000 ՀՀ դրամ
Վարկի ժամկետ	120 ամիս
Տարեկան անվանական տոկոսադրույք	14%
Տրամադրման վճար	1%
Գույքի ապահովագրություն	0.15% (տարեկան վարկի մնացորդի նկատմամբ)
Դժբախտ պատահարից ապահովագրություն	0.15% (տարեկան վարկի մնացորդի նկատմամբ)
Գրավի ձևակերպման հետ կապված ծախսեր (մոտավոր)	70 000 ՀՀ դրամ միանվագ
Վարկի մարում	120 ամիս՝ ամենամսյա հավասարաչափ մարումներ
Տրամադրման օր	1 նոյեմբեր, 2022թ.
Առաջին մարման օր	1 դեկտեմբեր, 2022թ.
Տարեկան փաստացի տոկոսադրույք	16.2%

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲՈԼՈՐ ՎԱՐԿԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- Վարկային պարտավորությունների վերաբերյալ քաղվածքները տրամադրվում են ՖԻՆՔԱ-ի ցանկացած մասնաճյուղում, իսկ այլ տեղեկատվությունը առավելագույնը 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ դիմումի հիման վրա: Քաղվածքների և այլ տեղեկատվության տրամադրման սակագները սահմանվում են ՖԻՆՔԱ-ի համապատասխան ներքին իրավական ակտերով:
- **Դուք կարող եք հաղորդակցվել ՖԻՆՔԱ-ի հետ ձեր նախընտրած եղանակով՝ փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումն առավել հարմար է, քանի որ զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից:**
- **Ֆիզիկական անձանց առաջարկվող վարկատեսակների համեմատության և ամենահարմար տարբերակի ընտրության համար կարող եք այցելել «Ձեր ֆինանսական տեղեկատուն» էլեկտրոնային հարթակը www.fininfo.am հասցեով:**

ՖԻՆՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՂ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ			
Անվանում	**Հասցե**	**Կոնտակտային տվյալներ**	
ՌՈՍԳՈՍՏՐԱԽ ԱՐՄԵՆԻԱ ԱՓԲԸ	ՀՀ, ք. Երևան, Հյուսիսային պող. 1	Հեռ.՝ (+374 12) 888888	էլ.փոստ՝ info@RGS.am **www.rgs.am**
ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ ԱՓԲԸ	ՀՀ, ք. Երևան, Արամի փող., 3	Հեռ.՝ (+374 60) 540000 (+374 10) 580000	էլ.փոստ՝ info@silinsurance.am **www.silinsurance.am**
ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ ԱՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փողոց 16, տարածք 1/1	Հեռ.՝ (+374 11) 560404 (+374 12) 560404	էլ.փոստ՝ info@armeniainsurance.am **www.armeniainsurance.am**
ՖԻՆՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ			
Անվանում	**Հասցե**	**Կոնտակտային տվյալներ**	
«ԿՈՍՏ ԿՈՆՍԱԼՏ» ՍՊԸ	ք. Երևան, Բյուզանդի 1	374 10 544882	cost@consultant.com
«ՕԼԻՎԵՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	ք. Երևան, Թումանյան 8	374 10 542740 374 10 542750	info@olivergroup.am
«Ա.Գ. ԲՈՐՍԱ» ՍՊԸ	ք. Երևան, Ն. Զարյան 22	374 10 252789	info@olivergroup.am
«ՎԻ ԷՄ - ԱՐ ՓԻ» ՍՊԸ	ք. Երևան, Վարդանանց փակ. 8	374 10 588797	vm-rp@mail.ru
«ԳԱՐԴԻ» ՍՊԸ	ք. Երևան, Վարդանանց փակ. 8	374 96 520590 374 95 520590	gardiltd@gmail.com
«Ֆինլոու» ՍՊԸ	ք. Երևան, Մաշտոցի պող. 17	374 10 506000 374 60 747400	finlaw@inbox.ru

Տրամադրվող հիփոթեքային վարկի շրջանակներում վարկառուի կողմից իրականացվող ծախսերն են.

- **միասնական տեղեկանք՝ 5,000-10,000 ՀՀ դրամ;**
- **գրավադրվող գույքի ապահովագրություն՝ վարկի մնացորդի 0,15%-ի չափով (նվազագույնը 2,000 ՀՀ դրամ);**
- **վարկառուի/համավարկառու(ներ)ի ապահովագրություն՝ վարկի մնացորդի 0,15%-ի չափով (նվազագույնը 1,000 ՀՀ դրամ);**
- **գրավի պայմանագրի վավերացման վճար 3,000-20,000 ՀՀ դրամ;**
- **գույքի և գրավի առարկայի գնահատման վճար՝ կախված գույքի տեսակից և մակերեսից ՝ 5,000-25,000 ՀՀ դրամ;**
- գրավի պայմանագրից ծագող Կազմակերպության իրավունքի պետական իրավասու մարմնում գրանցման վճար;
- գրավի իրավունքի գրանցում՝ մինչև 26,400 ՀՀ դրամ;
- սեփականության իրավունքի գրանցում՝ մինչև 46,100 ՀՀ դրամ;
- նոտարական վավերացման վճարներ՝ մինչև 20,000 ՀՀ դրամ;
- **հիփոթեքային պարտավորությունների ապահովագրություն՝ չվճարված կանխավճարի գումարի մնացորդի 2%-ի չափով (նվազագույնը 1,000 ՀՀ դրամ):**

Անկախ «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից սույն պայմաններում նշված վճարների չափերից, երրորդ անձանց կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարները կարող են փոփոխվել երրորդ անձանց կողմից:

ՆՇՈՒՄ. «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-Ն ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ:
Սույն վարկատեսակը ենթակա է վերանայման ուժի մեջ մտնելուց հետո առնվազն տարեկան մեկ անգամ: